*Մի մեղադրէք դասք արհեստի,*
*Զի կար մեր այս էր որ ցուցի։*
*Եւ իմ վարպետըն սրխրալի,*
*Եւ Տէր Ցովսէփն Աղթամարցի,*
*Ի յայսմ ամի վերափոխի,*
*'Ի ինձ սուգ եղեւ անբուժելի,*
*Դուք աղացէք սրտով ի լի,*
*Ինձ եւ նորա Տէրն ողորմի,*
*Որ քաղցրութեայց էր եւ բարի,*
*Եւ անձանձիր յարհեստ բանի։*

---

**7.**

## ՏԱՂ ՎԱՐԱԳԱՅ ԽԱՉԻՆ

### Ի ԶԱՔԱՐԻԱՅԷ ՎԱՐԱԳԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ

*Զվարագ ամեմ ըզբաղձալին,*
*Ըզհրեշտակաց փափագելին,*
*Ուր խաչափայտն էր Քրիստոսին,*
*Զոր էր բերեալ կոյս Հռիփսիմին։*

*Զվարագ ասեմ զգերգովելին,*
*Զերկոտասան լուսոյ տեղին,*
*Զաւրաւքն իջեալ Տէրն ի սրմին,*
*Զոր ակներեւ աշխարհս տեսին։*

---

**7.** Բնագիրը ընդօրինակուած է Մատենադարանի Թ. 663, Թղ. 19ա—20բ Ձեռագրէն (= A). համեմատուած է Թ. 577, Թղ. 120բ—121բ Ձեռագրէն (= B) եւ Արծուի Վասպուրականի թերթի մէջ հրատարակուած (1859, էջ 128—131) օրինակին (= C) հետ։ Հմմտ. Հանդ. Ամս. 284—85։

Խորագիրը A. ունի «Տաղ վարագա... վարագեցոյ ասացեալ։» B. պարզապէս «Տաղ ի վերայ վարագայ խաչին։»

3. B. վարաք... ըզբաղձալին։ C. զվարագն։ — 4. B. փափաքելին։ — 5. B. է։ 7. B. զվարաք։ C. զվարագն... ըզգովելին։ — 9. B զօրօք... ի նըմին։ C. զաւըքն։ — 10. C. աշխարհ։